ԿՅԱՆՔԸ ԾԱՌԻ ԱՉՔԵՐՈՎ

Արտիստի մտքերի նկարազարդ անթոլոգիա

AZNAVOUR

INÉDIT

LA VIE SELON CHARLES

présenté par Nicolas Aznavour
coordination : jennifer richard

ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ

ԱՆՏԻՊ

ԿՅԱՆՔԸ ԾԱՌԼԻ ԱՉՔԵՐՈՎ

Արտիստի մտքերի նկարազարդ անթոլոգիա

Ներկայացնում է Նիկոլա Ազնավուրը
Համակարգող՝ Ջենիֆեր Ռիշար

Թարգմանությունը ֆրանսերենից՝
Սամվել Գասպարյանի

ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87
Ա 250

Ազնավուր Շառլ
Ա 250 Կյանքը Շառլի աչքերով: Արտիստի մտքերի նկարագրդ անթոլոգիա / Շ. Ազնավուր.- Եր.: Newmag, 2024.- 216 էջ:

Շառլ Ազնավուրի փիլիսոփայության և մտքերի անթոլոգիան մեզ է ներկայացնում նրա որդին՝ Նիկոլա Ազնավուրը: Գրքում արտիստի հազարավոր ուշագրավ հարցազրույցներից խնամքով հավաքագրված հատվածներ են, որոնք ուղեկցվում են հազվագյուտ լուսանկարներով:

Երիտասարդություն, արմատներ, Հայաստան, ընտանիք, սեր, երաժշտություն, աշխատանք, արժեքներ, ճանապարհորդություն, Ֆրանսիա, բոհեմ, բիզնես, երկարակեցություն, մահ. մի խոսքով՝ կյանքը Շառլ Ազնավուրի աչքերով:

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87

ISBN 978-9939-967-62-2

Շառլ Ազնավուր, «Կյանքը Շառլի աչքերով» © 2024, «Նյու Մեգ» ՍՊԸ
Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել իրավահաջորդների հետ կնքած պայմանագրով:

Նախագծի հեղինակ

AZNAVOUR FOUNDATION

Գրքի բացառիկ գործընկեր

acba leasing

Շառլ Ազնավուրի 100-ամյակի
տոնակատարությունների գլխավոր գործընկերներ

HENDERSON

ARARAT
THE ARMENIAN BRANDY
1887

keron foundation


SERVICE
C.S. 29

Բովանդակություն

Նախաբան	9
Իմ երիտասարդությունը	11
Արմատներ	29
Հայաստան	37
Ընտանիք	53
Սեր	67
Երաժշտություն	73
Աշխատանք	101
Արժեքներ	115
Հանդուրժողականություն	123
Ճանապարհորդություն	129
Ֆրանսիա	141
Բոհեմ	151
Ես գործարար եմ	173
Երկարակեցություն	183
Մահ	191
Աղբյուրներ	204

Նախաբան

Կյանքն ակնթարթների քարավան է, կյանքը գորգ է, որը գործում ենք մեր հիշողություններով, ապրումներով ու երազանքներով: Հայրս իր կյանքը նվիրեց այդ գորգը երաժշտության, բառերի ու հույզերի թելերով հյուսելուն՝ դիպչելով աշխարհի տարբեր երկրներում գտնվող միլիոնավոր մարդկանց հոգու ամենանուրբ լարերին: Նրա երգերն իր հոգու, իր կյանքի պատմության և իր մղումների արտացոլանքն են:

Տարբեր հարցազրույցներից կազմված այս գիրքն ընթերցողին խոստանում է հետաքրքիր ճանապարհորդություն Ազնավուրի կյանքի և ստեղծագործության ոլորաններով՝ ժամանակի և տարածության միջով: Ազնավուրի բառերը, մտքերն ու խոհերը ձեռքից բռնած մեզ կտանեն Մ՝ոնմարտրի նեղլիկ փողոցներով, որտեղ նա մեծացել է, մեզ կուղեկցեն աշխարհի բազմաթիվ բեմերով, որտեղից նա հրդեհել է մարդկանց սրտերը, ապրումների ու կրքերի միջով, որոնք եղել են նրա կարիերայի ուղենիշ աստղը:

Հայրս կյանքի բանաստեղծ էր, սիրո երգիչ, հույզերի թարգման: Ծնվելով Ֆրանսիայում, հայկական ընտանիքում՝ կյանքում իր տեղը գտավ երաժշտության ասպարեզում, բեմի վրա, մարդկային պատմություններ ներկայացնելու արվեստում: Այդ պատմությունները մշտապես արձագանք են գտնում մարդկանց հոգիներում: Իր ստեղծած մեղեդիներն իր գրած երգերի նման ընթերցողի հետ մտերիմ զրույց են սիրո, թախիծի ու նվիրական զգացումների, հուշերի ու երազանքների մասին, դրանք կայացած արտիստի, միևնույն ժամանակ, սեփական արմատներին ու մարդասիրական արժեքներին հավատարիմ մարդու արտացոլանքն են:

Ազնավուրի թողած ժառանգությունը միշտ այժմեական է, նրա երգերը ժամանակից դուրս են, նրա բառերը հուզելու են մեզ, դրոշմվելու են սերունդների սրտերում: Այս ժողովածուն բաց պատուհան կլինի դեպի Ազնավուրի ներաշխարհը, կոգեշնչի և մտորումների առիթ կտա բոլոր նրանց, ովքեր զգացել են նրա երաժշտության հմայքի և պոեզիայի կախարդիչ ուժը:

Նիկոլա Ազնավուր

Շառլ Ազնավուրի որդին, «Ազնավուր» հիմնադրամի համահիմնադիր,
հոգաբարձուների խորհրդի նախագահ

Իմ
երիտասարդությունը

Մորս՝ Քնար Բաղդասարյանի գրկում,
մորական տատիս՝ Մարիամ Կալպակյանի
և քրոջս՝ Ադայի հետ

Ծնվել եմ Ասաս փողոցում գտնվող Տարնիե փոքրիկ հիվանդանոցում, որտեղ, ամենայն հավանականությամբ, լույս աշխարհ են եկել բազմաթիվ գաղթականների զավակներ, քանի որ այդ բուժարանը հիմնականում նախատեսված էր չքավորների համար: Մանկությունս անցել է **Լատինական թաղամասում.** նախ՝ Մայոլը-Պրենս, այնուհետև՝ Սեն Ժակ փողոցներում: Պապիկս մի փոքրիկ ռեստորան ուներ Շամպոլիոն փողոցում, հորս ռեստորանը Հուշետ փողոցի վրա էր, որտեղ հետագայում տեղակայվեց «Տեատր դը լա Հուշետ»-ը: Սրանով ուզում եմ ասել, որ Լատինական թաղամասն իմ բացահայտած առաջին «երկիրն էր»:

Ծնվել-մեծացել եմ Փարիզում, **արտիստների՝** երգիչ-դերասանների միջավայրում: Ուզում եմ ասել՝ ծնողներս արտիստ են եղել իրենց հայրենիքում՝ Հայաստանում, իսկ հետագայում, հայտնվելով Ֆրանսիայում, ֆրանսերեն չիմանալու պատճառով չեն կարողացել զբաղվել իրենց արհեստով և որոշել են ռեստորան բացել:

Ամբողջ **մանկությունս** հագեցած է եղել երաժշտությամբ, պոեզիայով և թատրոնով:

Մանկության լավագույն հուշերը կապված են **շոկոլադե կրուասանների հետ:** Շոկոլադե կրուասաններն ինձնից անբաժան են: Ես այսօր էլ եմ շոկոլադե կրուասան ուտում: Անհոգ տարիներիս տպավորիչ հուշերը կապված են ժամը չորսի հետ: Իմ կարծիքով՝ ժամը չորսը, որպես հուշ, սքանչելի է: Ժամը չորսին ժամանակը կանգ է առնում, երբ քեզ շոկոլադե կրուասան են տալիս:

Հայ մայրն աշխարհի բոլոր մայրերի նման, երեխայի ձեռքից բռնած, նրան քայլել է սովորեցնում: Այնուհետև ինչպես բոլոր մայրերը, դառնում է թխսամայր, սակայն **հայ երեխաները** գուցե փոքր-ինչ ավելի շատ են կապված իրենց ընտանիքին: Ամբողջ խնդիրն այն է, որ մեզ զրկել են հայրենիքից, և ընտանիքն առաջին և միակ երկիրն է, որը մեզ է պատկանում:



Կրոնական միջավայրում չեմ ապրել: Փոքր տարիքում տանն անցկացրել եմ ժամանակիս 50 տոկոսը, և, քանի որ ծնողներս լիակատար ազատություն էին տվել ինձ, մնացած 50 տոկոսն ապրել եմ **փողոցում՝** փողոցի երեխաների հետ, զբոսայգիներում. իրար հետ կռվում էինք, իրար ծեծում, սակայն, այնուամենայնիվ, փողոցի կյանքը մեզ դուր էր գալիս իր բարքերով:

Երբ ես փոքրիկ էի

Հայերն այնքան էլ լավ չեն պատկերացնում, թե ինչպես կարելի է ապրել՝ չենթարկվելով ընտանիքում գործող օրենքներին: Ես բավականին աշխույժ երեխա եմ եղել: Տանը սկսել եմ ծխել բավականին վաղ տարիքում: Ծնողներիս ներկայությամբ ծխել եմ 18 տարեկանում, առանց նրանց թույլտվությունը ստանալու. չլսված բան է: Սովորաբար տղաները սկսում են տանը ծխել 30-35 տարեկանում, այն օրը, երբ **հայրը** նվիրում է առաջին տուփ սիգարետը: Այսինքն՝ այն ժամանակ, երբ հայրն արդեն գիտի, որ իր տղան ծխում է:



CHARLOT

Imitateur

Երբեք թույլ չեմ տվել, որ ինձ, ինչպես ասում են, **հայհոյեն**, ինձ երբեք չեն ծեծել: Ավելին, տանը մեզ միշտ հասուն մարդու տեղ են դրել, նույնիսկ երբ դեռ երեխա էինք, ի միջի այլոց դա բոլորին աշխատեցնելու միջոց է: Եթե ուզում ես, որ երեխան ամանները լվանա, բայց նրան երեխայի տեղ ես դնում, նա երբեք ման չի լվանա: Երեխան ամանները կլվանա միայն այն դեպքում, երբ նրան մեծ մարդու տեղ ես դնում:

Հայրս մեծ երեխա էր: Փա՛ռք Աստծո, ծնողներս միշտ երեխա են եղել, իսկ ես՝ ընտանիքի **մեծ** մարդը:

Չունևոր ընտանիքներում ժամանակից շուտ են հասունանում, քանի որ պետք է թեթևացնել **ընտանիքի** հոգսը: Նախ՝ հարկավոր է ծնողներին թևութիկունք լինել տնային գործերում, դրանից հետո սկսել փող վաստակել և նրանց օգնել ֆինանսապես: Եթե ինձ հարցնեք, աղքատ ընտանիքում երեխաներն ավելի արագ են հասունանում, քան ունևոր:

Մենք ապրում էինք **կարիքի** մեջ, բայց աղքատ չէինք, և եթե անգամ ստիպված գրավ էինք դնում մի հին ինքնաեռ կամ անցյալի որևէ թանկ հուշ, մեր տնից սերը չէր պակասում:

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark